ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

*Սեպտեմբերի 15-ը Վրաստանում Գիտելիքի եւ դպրության օրն է: Պետության ուսումնական հաստատություններում մեկնարկում է 2016-2017 ուսումնական տարին: Ինչպե՞ս են պատրաստվում մեր երկրի քաղաքների եւ գյուղերի, մասնավորապես հայկական դպրոցները, որո՞նք են տարվա առավելություններն ու բացթողումները. այս եւ այլ հարցերով «Վրաստան» թերթը դիմեց միջնակարգ հաստատությունների տնօրեններին:*

# ՆՈՐ ՈՒՍՏԱՐԻ. ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ, ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ



*ԱՐՏՈՒՇ ՈՒՌՈՒՄՅԱՆ - Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահումյան ավանի հայկական հանրային թիվ 1 դպրոցի տնօրեն.*

- Ուսումնական այս տարին մի նոր լիցքով ենք սկսում, որ առավել քան խթան է բոլորի համար, հատկապես մանկավարժների համար: Հենց նրանց անմնացորդ նվիրման արդյունքում՝ 2015-2016 ուստարվա 15 շրջանավարտից 6-ն ընդունվեցին Վրաստանի տարբեր բուհեր, ըստ որում՝ 3-ն անվճար, եւս 3 շրջանավարտ շարունակելու են իրենց ուսումը Հայաստանի տարբեր բուհերում: Այս հաջողությունը, բնականաբար, պարտավորեցնող ու, միաժամանակ, ոգեւորող է, բայց չարձանագրել կամ անտեսել դպրոցին հուզող խնդիրները, չենք կարող: Եվ դա առաջնահերթորեն աշակերտների թվի աստիճանական նվազումն է, որ տարեցտարի առավել ցայտուն է դառնում: Եթե նախկինում մենք զուգահեռ դասարաններ էինք բացում, այժմ պարզապես ուրախանում ենք, որ 2016-2017 տարում ունենալու ենք 25 առաջին դասարանցի, այն էլ՝ հույս փայփայելով, որ գոնե այդ թիվը պահպանենք հետագա տարիներին:

- Կցանկանայի հատկապես դասագրքերի խնդրին անդրադառնալ: Հայտնի է, որ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը ինչպես մյուս, այնպես էլ մեր դպրոցն ապահովում է համապատասխան դասագրքերով: Մինչդեռ, նույնը չենք կարող ասել հայաստանյան կողմի մասին: Յուրաքանչյուր տարի մենք բախվում ենք նույն խնդրի՝ Երեւանում տպագրվող դասագրքերի, մասնավորապես Այբբենարանի, Հայոց լեզվի եւ Գրականության դասագրքերի խիստ պակասի հետ:

- Ուստի «Վրաստան» թերթում հանդես գալու պատեհ առիթը բաց չթողնելով, կցանկանայինք եւս մեկ անգամ բարձրաձայնել այս մասին, դիմելով Սփյուռքի ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը՝ առավել հետեւողական լինել այս հարցում: Թերեւս այսքանը:

- Եվ վերջում, կցանկանայի շնորհավորել համայն Վրաստանի ուսումնական մեկնարկը՝ մաղթելով նորանոր հաջողություններ եւ նվաճումներ մանկավարժներին եւ աշակերտությանը:



*ՍԵՐԳԵՅ ՂԱՆԴԻԼՅԱՆ - Բորժոմիի մունիցիպալիտետի Տաբածղուրի գյուղի հայկական հանրային դպրոցի տնօրեն.*

- Ի սրտե շնորհավորում եմ բոլորին, առաջին հերթին առաջին դասարանցիներին, աշակերտներին, ծնողներին, մանկավարժներին 2016-2017 ուսումնական տարվա առիթով ու մաղթում թերեւս ավանդականը. թող այն առավել հագեցած ու արգասաբեր լինի, քան նախորդը: Նորի սպասումն ակամայից լավատեսական տրամադրություններ է արթնացնում: Այդուհանդերձ, պահել այդ հոգեվիճակը հատկապես գյուղերում հետզհետե առավել, քան դժվարանում է: Տարին սկսում ենք 100 աշակերտով եւ 22 մանկավարժով: Ցավոք, եթե անցյալ տարի հասուն կյանք ճանապարհեցինք 10 շրջանավարտի, ապա այս տարին դիմավորում ենք ընդամենը ութ առաջին դասարանցիներով: Մեր դպրոցը մեկ անգամ չէ, որ հպարտացել է իր աշակերտներով: Այսպես, վերջին շրջանավարտներից Վարդուհի Գալոյանն ընդունվեց Երեւանի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետ, Լիանա Հովսեփյանը՝ Երեւանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետ, Ռիտա Իրիցյանը՝ Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու անվան համալսարանի Ախալցիխեի մասնաճյուղի նախապատրաստական բաժին, իսկ մյուսներն արդեն այս տարի են պատրաստվում ուժերը փորձել տարբեր ուսումնական հաստատություններում: Ինչ վերաբերում է դասագրքերին, ապա նման խնդիր մեր դպրոցը չունի: Ներբերվել են նաեւ պետության կողմից առաջին դասարանցիներին տրամադրվող համակարգիչներ: Եվ սակայն, խնդիրներից թերեւս ամենածանրը անգլերենի ուսուցման, որ այդքան կարեւոր է մեր օրերում, բացակայությունն է: Արդեն չորս տարի գյուղի դպրոցը չունի մասնագետ, իսկ հարակից գյուղերից ոչ ոք չի համաձայնում աշխատել մեզ մոտ՝ ելնելով տարածաշրջանի անբարենպաստ բնակլիմայական ու նաեւ դժվարին երթեւեկելի պայմաններից: Անմխիթար է նաեւ դպրոցի ներքին ու արտաքին վիճակը՝ ունենալով հիմնարար վերանորոգման կարիք:

Եվ սակայն, նման կարիքները չեն խաթարում մանկավարժներիս եռանդը, շարունակում ենք պահել հույսն առ դրական տեղաշարժեր: Եվս մեկ անգամ շնորհավորում եմ կրթության բոլոր նվիրյալներին:

# 17 ԺԻՐ ՈՒ ԿԱՅՏԱՌ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԿՀԱՃԱԽԵՆ ՄԵՐ ԴՊՐՈՑ

*Նոր ուսումնական տարվա կապակցությամբ աշխույժ եռուզեռ է Ասպինձայի մունիցիպալիտետի Դամալա գյուղի հանրային դպրոցում:*

Ուրախ ու զվարթ խանդավառությամբ 17 անուշ մանուկներ առաջին անգամ ոտք կդնեն դպրոց, որտեղ նրանց սիրով ու հոգատարությամբ սպասում է արդեն չորս տասնյակից ավելի աշխատանքային փորձ ունեցող, տարրական դասարանների դասվար Ծովինար Ֆարմանյանը: Ի տարբերություն անցյալ տարվա, այս ուսումնական տարում աճել է առաջին դասարանցիների թիվը. տասներեքի փոխարեն, ունենք տասնյոթ աշակերտ: Անցյալ ուստարում XII դասարանն ավարտեց հինգ աշակերտ, որոնցից երկուսն ընդունվել են Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններ:

2016-2017 ուստարում դպրոցի XII դասարանը կավարտի 23 աշակերտ, որոնցից երկուսը ոսկե մեդալի թեկնածուներ են (Մարինե Սաղաթելյան, Կարեն Քերոբյան): Դպրոցի աշակերտները սիստեմատիկաբար մասնակցում են Վրաստանի կրթության ու գիտության նախարարության կողմից հայտարարված եւ աջակցված տարբեր մրցույթների:

Ուրախությամբ նշեմ, որ 2015-2016 ուստարում VII դասարանում Վրաստանի քննությունների ազգային կենտրոնի կողմից անցկացվեց պետական գնահատում «Վրացերենը որպես երկրորդ լեզու» առարկայից: Գնահատմանը մասնակցում էին ինչպես VII դասարանի աշակերտները, այնպես էլ՝ ուսուցիչներն ու ծնողները: Գնահատումն անցավ բարձր արդյունքներով, որի համար քննությունների ազգային կենտրոնի տնօրենի կողմից դպրոցն ստացավ շնորհակալագիր, իսկ աշակերտներն ու կոորդինատորը՝ խորհրդանշային նվերներ:



Շնորհավորում եմ մեր VII եւ XII դասարանների աշակերտներին ձեռք բերած նոր նվաճումների համար, ուսուցիչներին, որոնք իրենց ավանդն են ներդրել այդ հաղթանակների մեջ, հատկապես՝ «Վրացերենը որպես երկրորդ լեզու» ուսուցանող ուսուցչուհի Թամար Տիվաձեին, Աստղիկ Սաղաթելյանին, փոխտնօրեն Լալա Գրիգորյանին, VII դասարանի դասղեկ Ազգանուշ Հարությունյանին եւ VII դասարանի աշակերտների բոլոր ծնողներին՝ մաղթելով նրանց քաջառողջություն ու նորանոր հաջողություններ:

Օգտվելով առիթից՝ նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ, ուզում եմ շնորհավորել նաեւ «Վրաստան» թերթի անձնակազմին՝ մաղթելով նրանց բեղմնավոր աշխատանքային գործունեություն եւ շնորհակալություն հայտնել թերթի առաքման, մեր ցանկությունները ու բարեմաղթանքները թերթին հանձնելու եւ բոլորին իրազեկ դարձնելու հնարավորության համար:

*ՆԵԼԼԻ ԴՈՒԴՈՒԿՉՅԱՆ*
*Դամալայի հանրային դպրոցի տնօրեն*

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

# ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՈՍԿԵ ԵՎ ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼՆԵՐ՝ ՈՒՍՄԱՆ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

*Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության «Գերազանց աշակերտների մեդալների ծրագրի» նպատակը դպրոցականների ուսման առաջադիմության եւ մոտիվացիայի բարձրացումն է:*

Մեդալակիր թեկնածուների ընտրության չափանիշները կարգավորվում են «Ազգային ուսումնական ծրագրի հաստատման մասին» Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի 2011 թվականի մարտի 11-ի N36/ն հրամանով (հոդված 25): Համաձայն հրամանի, այն աշակերտը, ում միջնակարգ աստիճանի ընդհանուր միավորը առանց կլորացման 10 է եւ դպրոցի ավարտական քննություններին կստանա դրական գնահատում, նրան տրվում է լրիվ միջնակարգ կրթության Ոսկե մեդալակիրի ատեստատ, իսկ այն աշակերտը, ում միջնակարգ աստիճանի ընդհանուր միավորը 9,8 է, կամ՝ ավել եւ դպրոցի ավարտական քննություններին դրական կգնահատվի, արժանանում է լրիվ միջնակարգ կրթության Արծաթե մեդալակիրի ատեստատի:

2015-2016 ուսումնական տարում Վրաստանի մասշտաբով ոսկե մեդալի են արժանացել 1773, արծաթե՝ 948 շրջանավարտ, այդ թվում են նաեւ հայազգի 28 ոսկե եւ 31 արծաթե մեդալակիրներ: Հավելենք, որ թերթի նախորդ համարներից մեկում զետեղված էր տեղեկություն Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի մեդալակիրների մասին:

**Ոսկե մեդալակիրներ.**

Ալբերտ Մարգարյանը (Բաթումիի թիվ 3 հանրային դպրոց), Ալինա Բալասանյանը (Բաթումիի «Եվրա-2000» դպրոց), Լեւոն Հովհաննիսյանը (Բաթումիի գիմնազիա՝ «21-րդ դար»), Սվետլանա Հովհաննիսյանը, Իրմա Նուրալովը (Թբիլիսիի թիվ 116 հանրային դպրոց), Ալեքսանդրե Մանուկյանը (Թբիլիսիի թիվ 155 հանրային դպրոց), Լիանա Սարգսյանը, Արտեմ Արուշանովը (Թբիլիսիի թիվ 98 հանրային դպրոց), Քեթի Սանամյանը (Թբիլիսիի թիվ 59 հանրային դպրոց), Գրիգորի Մովսեսյանը (Թբիլիսիի թիվ 81 հանրային դպրոց), Ալեքսանդրե Շահնազարովը (Թբիլիսիի թիվ 89 հանրային դպրոց), Վիկտորյա Հարությունովան (Թբիլիսիի հանրակրթական դպրոց՝ «Ինտելեկտ»), Իզաբելա Օգանեզովան (Թբիլիսիի թիվ 128 հանրային դպրոց), Մադոննա Խանոյանցը (Ադիգենիի մունիցիպալիտետի Աբասթումանի հանրային դպրոց), Նոդար Մելքոնյանը, Սուսաննա Խրիկյանը (Ախալքալաքիի թիվ 2 հանրային դպրոց), Սաթենիկ Ալեքսանյանը (Բորժոմիի թիվ 3 հանրային դպրոց), Վիկտոր Հովսեփյանը (Նինոծմինդայի մունիցիպալիտետի Հեշտիայի թիվ 2 հանրային դպրոց), Գեւորգ Մարկոսյանը (Գորելովկայի թիվ 2 հանրային դպրոց), Էդվարդ Շայբեկյանը, Արթուր Փահլեւանյանը (Օրլովկայի հանրային դպրոց), Ծովինար Հախվերդյանը (Գանձայի թիվ 2 հանրային դպրոց), Լաուրա Սանամյանը (Նինոծմինդայի թիվ 4 հանրային դպրոց), Հայկանուշ Պողոսյանը (Գանձայի թիվ 1 հանրային դպրոց, Մանուշակ Վարդանյանը (Փոքր Գոնդուրայի հանրային դպրոց), Շառլոտտա Սիմոնյանը (Ծալկայի Դարաքովի հանրային դպրոց), Մարիամ Բարբարյանը (Խաշուրիի թիվ 8 հանրային դպրոց):

**Արծաթե մեդալակիրներ.**

Լիլի Եդիգարովը (Թբիլիսիի թիվ 116 հանրային դպրոց), Լաուրա Կրնչոյանը, Լարիսա Փիլոյանը, Իննա Բաղդասարյանը, Դիմիտրի Մատինյանը (Թբիլիսիի թիվ 98 հանրային դպրոց), Մարիամ Դալիբարդյանը (Թբիլիսիի թիվ 150 հանրային դպրոց), Միլենա Բաղդասարյանը (Թբիլիսիի Վ. Գզիրիշվիլու անվան թիվ 173 հանրային դպրոց), Վերա Խանչալյանը (Թբիլիսիի թիվ 90 հանրային դպրոց), Գայանե Վարդանյանը (Թբիլիսիի թիվ 92 հանրային դպրոց), Մարիամ Մելքոնյանը, Լիլիա Մինասյանը, Աննա Թադեւոսյանը (Թբիլիսիի թիվ 96 հանրային դպրոց), Արթուր Բաղդասարյանը (Թբիլիսիի թիվ 105 հանրային դպրոց), Նաթիա Միրզոյանը (Սիղնաղիի մունիցիպալիտետի Ծնորիի թիվ 3 հանրային դպրոց), Նինո Գրիգորյանը, Գիորգի Դարբինյանը (Ասպինձայի հանրային դպրոց), Տիգրան Տոնոյանը (Բորժոմիի մունիցիպալիտետի Դաբա Ծաղվերիի հանրային դպրոց), Մկրտիչ Սարգսյանը (Նինոծմինդայի մունիցիպալիտետի Ղուլալիսիի հանրային դպրոց), Անահիտ Ղազարյանը (Գորելովկայի թիվ 2 հանրային դպրոց), Աշխեն Կակոսյանը (Սաթխայի հանրային դպրոց), Ենոք Չոգանդարյանը, Մարիանա Գրիգորյանը (Նինոծմինդայի թիվ 1 հանրային դպրոց), Հռիփսիմե Նալբանդյանը (Գանձայի թիվ 1 հանրային դպրոց), Ռիտա Կրմաջյանը (Փոքր Գոնդրիոյի հանրային դպրոց), Ջուլետտա Եզեկյանը (Ջիգրաշենի հանրային դպրոց), Թաթիա Ստեփանովը (Գորիի թիվ 3 հանրային դպրոց), Քրիստինա Սահակյանը (Ախալքալաքիի թիվ 2 հանրային դպրոց), Քրիստինե Այվազյանը, Ռաֆայել Քոսյանը (Ախալքալաքիի թիվ 4 հանրային դպրոց), Գոհարիկ Մարգարյանը (Օկամիի թիվ 2 հանրային դպրոց:

*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*
*Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու դպրոցներում ուսումնական նյութերի ներդրման փորձագետ*

# Վրաստանի խորհրդարանի 2016 թվականի հոկտեմբերի 8-ի ընտրություններ

## էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողներ

## Մատչելի ծառայություններ

Վրաստանի ընտրական վարչակազմը ակտիվորեն աշխատում է էթնիկ փոքրամասնությունների ընտրողների համար հավասար ընտրական միջավայրի ստեղծմանը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) համար առաջնային խնդիր է հանդիսանում Վրաստանի տարածքում հոծաբնակ էթնիկ փոքրամասնությունների ընտրողների տեղեկատվության եւ ընտրական գործընթացի մեջ նրանց ներգրավվածության ապահովումը: Այս ուղղությամբ իրականացվում են զանազան նախագծեր: ԿԸՀ-ի համար անչափ կարեւոր է, որ ընտրություններն անցկացվեն միջազգային եւ ժողովրդավարական չափանիշներին համապատասխան, ինչը նշանակում է բոլոր ընտրողների համար հավասար ընտրական պայմանների ստեղծում:

Վրաստանի խորհրդարանի 2016 թվականի հոկտեմբերի 8-ի ընտրությունների համար Վրաստանի ընտրական վարչակազմը էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողներին առաջարկում է հետեւյալ ծառայությունները.

**Տեղեկատվություն**

☐ ԿԸՀ-ի կողմից պատրաստված տեղեկատվական-գովազդային տեսահոլովակները Հանրային հեռարձակման եւ տարածաշրջանային հեռուստատեսությունների հեռուստաեթերում հեռարձակվում են հայերեն եւ ադրբեջաներեն:

☐ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողները, ԿԸՀ-ի հեռախոսային/տեղեկատվական կենտրոնի միջոցով, ընտրությունների հետ կապված տեղեկատվությունը կարող են ստանալ հայերեն եւ ադրբեջաներեն:

☐ էթնիկ փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում ապրող Վրաստանի քաղաքացի ազգությամբ հայ եւ ադրբեջանցի ընտրողները, ընտրողների միասնական ցուցակի որոնողական համակարգից (voters.cec.gov.ge) կարող են օգտվել ԿԸՀ-ի պաշտոնական կայքէջի եւ բջջային հեռախոսի/պլանշետի կիրառմամբ (որը հարմարեցված է «Android» համակարգին): Սեփական տվյալների վերստուգման հետեւանքով կստանան տեղեկատվություն, թե որ ընտրական տեղամասում են գրանցված, կարող են տեսնել նաեւ ընտրական տեղամասի գտնվելու վայրը քարտեզի վրա: Նորույթ. ընտրացուցակում սեփական տվյալների վերստուգումը հնարավոր է Վրաստանի մասշտաբով տեղադրված 7000 արագ վճարման տերմինալների միջոցով:

**Մասնակցություն քվեարկությանը**

Վրաստանի քաղաքացի ազգությամբ հայ եւ ադրբեջանցի ընտրողների համար թարգմանվում են (վրացերեն-հայերեն եւ վրացերեն-ադրբեջաներեն) եւ կտպագրվեն հետեւյալ ընտրական փաստաթղթերը.

☐ քվեաթերթիկը,

☐ տեղամասային ընտրական հանձնաժողովում պատին փակցնելու համար հատկացված՝ քվեարկության շենքը եւ ընթացակարգերը պատկերող պաստառը,

☐ ընտրողների հուշաթերթը,

☐ քվեաթերթիկը լրացնելու կարգը,

☐ ընտրողների միասնական ցուցակը (պատին փակցնելու եւ սեղանի համար):

**Քաղաքացիական եւ կրթական նախագծեր՝ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների համար**

Ընտրողների տեղեկատվության եւ քաղաքացիական ներգրավվածության բարձրացման նպատակով, ԿԸՀ-ին կից գործող Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների եւ ուսուցման կենտրոնը (Ուսուցման կենտրոն) մրցույթի կարգով դրամաշնորհներ է տրամադրում տեղական հասարակական կազմակերպություններին: ԿԸՀ-ը ամեն տարի սահմանում է դրամաշնորհային մրցույթի շրջանակներում ֆինանսավորվելիք ուղղությունները:

Վրաստանի խորհրդարանի 2016 թվականի հոկտեմբերի 8-ի ընտրությունների համար դրամաշնորհային մրցույթների առաջնային ուղղություն է հանդիսանում աջակցությունը քաղաքական (ընտրական) գործընթացներին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների մասնակցությանը: Դրամաշնորհային մրցույթի շրջանակներում ֆինանսավորված 8 նախագծերն ամբողջությամբ ներառում են էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանները:

**Ընտրական հարցերի հետ կապված ցանկացած տեղեկատվություն ստանալու նպատակով կապվե՛ք ԿԸՀ-ի հեռախոսային/տեղեկատվական կենտրոնի հետ, հետեւյալ հեռախոսահամարով՝**

**2 51 00 51**

**www.cesko.ge**

**Տեղեկատվությունը կարելի է ստանալ հայերեն եւ ադրբեջաներեն:**

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ժողովրդավարության ծառայություն

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՎԱՐՉԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ

*Սեպտեմբերի 8-ին, Հայաստանի նախագահ, Հայաստանի Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) ղեկավար Սերժ Սարգսյանի նախագահությամբ, կուսակցության գրասենյակում մեկնարկեց ՀՀԿ գործադիր մարմնի նիստը, որին հաջորդեց ՀՀԿ խորհրդի նիստը:*



ՀՀԿ ԳՄ եւ Խորհրդի նիստերի ընթացքում քննարկվել է նոր վարչապետի նշանակման հարցը: ՀՀԿ խորհրդի նիստում ելույթ ունեցավ ՀՀԿ-ի կողմից Հայաստանի վարչապետի թեկնածու առաջադրված Կարեն Կարապետյանը:

Նա իր խոսքում շնորհակալություն հայտնեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին եւ ՀՀԿ խորհրդի նիստի մասնակիցներին՝ վստահության համար եւ հավաստիացրեց, որ ամեն ինչ կանի արդարացնելու այդ վստահությունը: Կարեն Կարապետյանը նաեւ շնորհակալություն հայտնեց վարչապետ Հովիկ Աբրահամյանին՝ նրա աշխատանքի համար: Հայաստանի վարչապետի թեկնածուն նշել է, որ մոտ ժամանակներս կներկայացնի մեր երկրի զարգացման վերաբերյալ ծրագիր, որը բաղկացած կլինի երկու փուլից: Առաջին փուլը կներառի այն հնարավոր արագ փոփոխությունները ու հաջողությունները, որոնք կարող են ինչ-որ առումով վստահություն եւ հավատ ներշնչել ծրագրի նկատմամբ, իսկ երկրորդ փուլը կլինի երկրի հեռանկարային զարգացման տեսլականը:

53-ամյա Կարեն Կարապետյանը ծնվել է Ստեփանակերտում: Ավարտել է Երեւանի պետական համալսարանը: Տնտեսագիտական գիտությունների թեկնածու է, 17 գիտական աշխատանքների հեղինակ է: Դասախոսել է համալսարանում: Տարբեր տարիներին ղեկավար պաշտոններ է զբաղեցրել «Հայէներգո», «Հայռուսգազարդ» եւ այլ ընկերություններում: 2010-2011թթ. եղել է Երեւանի քաղաքապետ: 2011 թվականից «Գազպրոմբանկ» ԲԲԸ առաջին փոխնախագահն է:

## «ԿԱՅՈՒՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՍՆՈՒՆԴ» ԾՐԱԳԻՐԸ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ



*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը սեպտեմբերի 5-ին հանդիպում ունեցավ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի գործադիր տնօրեն Էրթարին Քազընի եւ Երեւանում անցկացվող «Երեխաների սնուցման համաշխարհային 18-րդ ֆորումի» մասնակիցների հետ:*

Հանդիպմանը Հայաստանի նախագահը ողջունեց ավելի քան վեց տասնյակ երկրներից ֆորումին մասնակցելու համար Հայաստան ժամանած ներկայացուցչական պատվիրակության անդամներին եւ շնորհակալություն հայտնեց տարածաշրջանում առաջին անգամ անցկացվող այդ կարեւոր միջոցառման կազմակերպիչներին եւ մասնավորապես՝ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի գործադիր տնօրեն տիկին Քազընին:

Հանդիպմանը երկուստեք գոհունակությամբ նշվեցին վերջին տարիներին դպրոցական սննդի ապահովման ոլորտում Հայաստանի արձանագրած հաջողությունները եւ կուտակված մեծ փորձը, ինչն էլ, կազմակերպիչների խոսքով, ֆորումը Հայաստանում անցկացնելու առիթ է դարձել:

Հայաստանի նախագահը բարձր գնահատեց Հայաստանի կառավարության եւ Պարենի համաշխարհային ծրագրի միջեւ հաստատված համագործակցությունը եւ դրա շնորհիվ Հայաստանում իրականացվող «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը, որի արդյունքում այժմ Հայաստանի տասը մարզերի մոտ 83 հազար երեխա ապահովված է դպրոցական սննդով:

Հանդիպման մասնակիցները շնորհակալություն են հայտնել ֆորումը Հայաստանում բարձր մակարդակով հյուրընկալելու համար եւ պատրաստակամություն հայտնել շարունակելու սերտ համագործակցությունը Հայաստանի հետ:

## ՀՈՒՇԱԳԻՐ՝ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԳԵԼՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ

*Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագրի կազմակերպության նախապատրաստական հանձնաժողովի գրասենյակում, սեպտեմբերի 7-ին, տեղի է ունեցել Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման համար մշտադիտարկման կառույցներին առնչվող աշխատանքների իրականացման մասին Հայաստանի կառավարության եւ հանձնաժողովի միջեւ համաձայնագրի ստորագրման արարողությունը:*

Համաձայնագիրը ստորագրել են Ավստրիայում ՀՀ դեսպան, Վիեննայում գործող միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցիչ Արման Կիրակոսյանը եւ Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման կազմակերպության նախապատրաստական հանձնաժողովի Գործադիր քարտուղար Լասինա Զերբոն:

Համաձայնագիրը նպաստելու է ՀՀ եւ Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագրի կազմակերպության նախապատրաստական հանձնաժողովի միջեւ համագործակցության հետագա զարգացմանը՝ միջազգային դիտարկումների իրականացման շրջանակներում:

## ԱՆԳԵԼԱ ՄԵՐԿԵԼ. «ՊԵՏՔ Է ՀԱՐԳԵԼ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՈՂ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻ ԲԱՆԱՁԵՎԸ»

*Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը դաշնային կանցլերի վարչական ապարատի շենքում RTL հեռուստաալիքին հարցազրույց է տվել, որի ժամանակ խոսել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող Բունդեսթագի բանաձեւը հարգելու անհրաժեշտության մասին:*

«Թուրքիայի հետ հարաբերությունները չփչացնելու համար Գերմանիայի կառավարությունը ոչ մի դեպքում չի չեղարկի Հայոց ցեղասպանությունը ճանաչող Բունդեսթագի բանաձեւը: Ես ինքս Բունդեսթագի անդամ եմ եւ գիտեմ, որ Գերմանիայի կառավարությունը չի պատրաստվում բանաձեւի վերաբերյալ հայտարարություն անել: Միայն ասեմ, որ անհրաժեշտ է հարգել Հայոց ցեղասպանությունը ճանաչող Բունդեսթագի բանաձեւը»,- ասել է Մերկելը հարցազրույցի ժամանակ:

Հիշեցնենք, որ Բունդեսթագը հունիսի 2-ին կայացած քվեարկության ժամանակ ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձեւը, ինչից հետո Թուրքիան հետ է կանչել Գերմանիայում իր դեսպանին:

Ընդունված բանաձեւում ընդգծվում է Օսմանյան կայսրության դաշնակից Գերմանիայի դերակատարությունը Հայոց ցեղասպանության հարցում:

Գերմանիան այս բանաձեւով հայերին ու թուրքերին կոչ է անում հաշտության հիմքեր ստեղծել անցյալի գերեզմանների վրա եւ նշում, որ իրենք պատրաստ են աջակցել դրան:

## «ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԻ ՕՐ»

### ԹԱՏՐՈՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Հայաստանի նախագահի տիկին Ռիտա Սարգսյանի հովանու ներքո Հայաստանի մշակույթի նախարարության աջակցությամբ եւ «ՅՈՒՆԻՄԱ-Հայաստանի» (Տիկնիկային արվեստի գործիչների միջազգային միության հայկական կենտրոն) նախաձեռնությամբ՝ սեպտեմբերի 9-15-ը կանցկացվի «Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների միջազգային 11-րդ փառատոնը:*

Փառատոնն այս տարի նվիրվում է Հայաստանի անկախության 25-ամյակին: Այն նպատակ ունի նպաստելու մշակութային կյանքի աշխուժացմանը, ինչպես նաեւ ծառայելու մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակությանն ու ապագա քաղաքացու ձեւավորմանը: Փառատոնին կմասնակցեն տիկնիկային թատրոններ՝ Արցախից եւ Հայաստանի տարբեր մարզերից, Վրաստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Իտալիայից, Հունգարիայից եւ այլ երկրներից:

Ավանդույթի համաձայն, փառատոնի մեկնարկը տրվեց ՀՀ Լոռու մարզի Դսեղ գյուղում, սեպտեմբերի 9-ին, Հ. Թումանյանի հուշարձանին ծաղկեդրման արարողությամբ: Դսեղում փառատոնի մասնակիցները կդիտեն Հ.Թումանյանի «Շունն ու կատուն» տիկնիկային ներկայացումը՝ նվիրված բալլադի 130-ամյակին:

Փառատոնի հանդիսավոր բացումը անցկացվեց այսօր՝ սեպտեմբերի 10-ին, Գյումրի քաղաքի «Թռչունյան տուն» մանկատանը:

## ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ՀՐԱՉՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆԸ



***Երկարատեւ ու ծանր հիվանդությունից հետո կյանքի 63-րդ տարում մահացել է Հայաստանի Մատենադարանի տնօրեն Հրաչյա Թամրազյանը: Հ.Թամրազյանը ավարտել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, 1977թ. աշխատանքի է անցել Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում՝ նախ որպես ավագ լաբորանտ, ապա կրտսեր ու ավագ գիտաշխատող: Աշխատել է «Սովետական գրող» հրատարակչությունում՝ որպես գլխավոր խմբագիր, եղել է «Նաիրի» հրատարակչության տնօրենը: 1986 թվականից Գրողների միության անդամ է: 1993թ. նշանակվել է ՀՀ կառավարությանն առընթեր Հրատարակչական գործերի վարչության պետ, իսկ 1995-1997թթ. ղեկավարել է ՀՀ Տեղեկատվության նախարարությունը: Հրաչյա Թամրազյանը 1997-2007թթ. համատեղությամբ աշխատել է որպես «Նաիրի» հրատարակչության տնօրեն եւ Մատենադարանի ավագ գիտաշխատող: 1999թ. ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2007 թվականից զբաղեցնում է Մատենադարանի տնօրենի պաշտոնը: 2014 թվականից Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ է:***

## ՔԱՌՅԱԿԻ ԼՈՒՅՍ ԱՇԽԱՐՀ ԳԱԼՈՒՆ ՆԱԽՈՐԴԵԼ Է ԵՌՅԱԿԻ ԾՆՈՒՆԴԸ

***Սեպտեմբերի 3-ին Երեւանի «Արմենիա» Հանրապետական բժշկական կենտրոնում 26-ամյա Մարիամ Թունյանը բնական ճանապարհով լույս աշխարհ է բերել քառյակ: Երեխաներից երկուսը տղա են, երկուսը՝ աղջիկ:***

***Երեխաների ծնողները բնակվում են Գորիսում եւ ունեն 3,5 տարեկան դուստր: Բնական ճանապարհով՝ ոչ արհեստական բեղմնավորմամբ, քառյակ լույս աշխարհ բերելը բացառիկ երեւույթ է համարվում:***

***Հատկանշական է, որ նախօրեին, սեպտեմբերի 2-ին նույն, Երեւանի «Արմենիա» Հանրապետական բժշկական կենտրոնում Շիրակի մարզի Շիրակավան գյուղի բնակչուհի 28-ամյա Շուշանիկ Ասատրյանը լույս աշխարհ է բերել եռյակ՝ երեք արու զավակ: Երեխաները ծնվել են բնական ճանապարհով՝ ոչ արհեստական բեղմնավորմամբ: Շուշանիկ Ասատրյանն ունի եւս երեք երեխա:***

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԶՈՀ Է ԴԱՐՁԵԼ 139 ՄԱՐԴ

***Հայաստանում 2016թ. հունվար-հունիս ամիսներին գրանցվել է 5 101 արտակարգ իրավիճակ, տուժել է 4 253 մարդ (139-ը զոհվել է, 4 114-ը՝ վիրավորվել), 2 787-ը՝ ժամանակավորապես տարհանվել: Ըստ ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության ամփոփ տեղեկատվության, գրանցված արտակարգ իրավիճակներից 216-ը տարերային աղետներ են, ինչի պատճառով տուժել է 6 մարդ, այդ թվում ամպրոպի, կայծակի եւ սելավի հետեւանքով՝ 2 զոհ, ժամանակավորապես տարհանվել է 2 780 մարդ:***

***Արտակարգ իրավիճակներից 2 909 դեպքը գրանցվել է տեխնածին աղետներում, որից ընդհանուր տուժել է 2 106 մարդ: Այդ թվում 118-ը զոհվել են, 1 988-ը՝ վիրավորվել, 7-ը ժամանակավորապես տարհանվել են: 1976 սոցիալ-կենցաղային աղետներից ընդհանուր առմամբ տուժել է 2 141 մարդ, այդ թվում՝ 19 զոհ եւ 2 122 տարհանված: Ընդ որում, 1 889 դեպքում գրանցվել է թունավորում, ինչի հետեւանքով տուժել է 2 131 մարդ, որից 11-ը զոհվել են, իսկ 2 120-ը՝ վիրավորվել:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

***11.09.2016. Խաչվերաց***

Խաչվերացը Հայ եկեղեցու հինգ տաղավար տոներից վերջինն է: Այն խաչին նվիրված տոներից ամենակարեւորն է, որովհետեւ նվիրված է գերությունից խաչի վերադարձի եւ փառաբանության հիշատակին: Հայաստանյայց եկեղեցում Խաչվերացը տոնում են սեպտեմբերի 11-17-ն ընկած ժամանակահատվածում հանդիպող կիրակի օրը: Սուրբ Խաչը տոնվում է ի հիշատակ Տիրոջ խաչափայտի՝ պարսկական գերությունից Երուսաղեմ վերադարձի եւ Գողգոթայում կանգնեցման (վերացման): Այստեղից էլ տոնը կոչվում է Խաչվերաց:

Խաչվերացի տոնը մեզ համար նախեւառաջ հարությամբ նորոգվելու խորհուրդն ունի:

Խաչվերացի հաջորդ օրը մեռելոց է:

***18.09.2016. Բարեկենդան Վարագա Սուրբ Խաչին***

ՆՈՐՈՒՅԹ

# ՕԴԱՅԻՆ ՏԱՔՍԻՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Ընթացիկ տարվա նոյեմբերից Վրաստանում սկսելու են գործել օդային տաքսիներ: «Adjara Group» ընկերությունը այժմ սպասում է թռիչքների թույլատրագիր ստանալուն, եւ, ինչպես ենթադրվում է, նոյեմբերի 15-ին օդաչուները կսկսեն կատարել առաջին չվերթերը: Այդ մասին հայտնել է «Adjara Group»-ի գլխավոր տնօրեն Վալերի Չխեիձեն:*



Մարկետինգի եւ բիզնեսի զարգացման հարցերով տնօրեն Օթո Բերիշվիլին բացատրել է, որ ներկա փուլում ընկերությունը մշակում է երթուղիների սխեմաները եւ որոշում գնային քաղաքականության ուղղությունը:

Ինքնաթիռները, որոնք տնօրինում է ընկերությունը, ձեռք են բերվել ԱՄՆ-ում:

Դրանք ութտեղանոց Beechcraft ինքնաթիռներ են, որոնք արտադրվել են ամերիկյան «Beech Aircraft» ֆիրմայի կողմից, որը թողարկում է քաղաքացիական եւ ռազմական ավիատեխնիկա:

Ինչպես հայտնել է Բերիշվիլին, «Ավիատոր» բրենդի ներքո օդային տաքսիները չվերթեր կկատարեն Կազբեգի, Բաթումի, Սվանեթի տարածաշրջան եւ Վրաստանի այլ վայրեր, որտեղ հարթակներ են պատրաստված ինքնաթիռների վայրէջքի համար:

Թռիչքների աշխարհագրությունն ընդլայնելու նպատակով, «Adjara Group»-ը աշխատում է նաեւ ամբողջ երկրում օդակայանների ցանցի զարգացման վրա:

Ավիատաքսիներով թռիչքները չարտերային եւ առեւտրային ավիափոխադրումներից տարբերվում են գրանցման ծանծրալի ընթացակարգերի եւ մեկնման հետ կապված տեւական սպասումների բացակայությամբ: Ուղեւորները կարող են ժամանել թռիչքից 10-15 րոպե առաջ եւ անցնել գրանցման ու մաքսային ձեւակերպումների կրճատված ընթացակարգ: Դա թույլ է տալիս զգալիորեն տնտեսել ճանապարհի ժամանակը:

Նման փոխադրումների ժամանակ, որպես կանոն, չկան ո՛չ խոհանոցներ, ո՛չ բորտուղեկցորդներ, ո՛չ զուգարաններ: Ավիատաքսիների ծառայություններին հաճախակի դիմում են տուրիստական ընկերությունները՝ զբոսաշրջիկներին հեռավոր անկյուններ հասցնելու համար կամ թռչնի թռիչքի բարձրությունից տեսարժան վայրերը տեսնելու նպատակով:

ԱՎԱՆԴՈՒՅԹ

# ԳՈՒՐԻԵԹԵՐԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՏՈՆ ՏՈՒՐՑԽՈՒՄ

*Օգոստոսի 28-ին Ախալքալաքիի շրջանի Տուրցխ գյուղում տեղի ունեցավ վիրահայ բանաստեղծ, արձակագիր Գուրի Եթերի (1951-2015) հիշատակին նվիրված Պոեզիայի (երկրորդ անգամ) տոնը:*



Ջավախքյան պոեզիայի մթնոլորտը տերյանական եւ ջիվանիական պոեզիայի օրերից հետո համալրվեց Գուրիեթերական պոեզիայի օրով: Պոեզիայի օրվան ներկա էին ազատամարտի, ֆոտոլուսանկարիչ, 100+1 ծրագրի հեղինակ Մուշեղ Գասպարյանը, հայաստանցի բանաստեղծներ Սուսաննա Իսահակյանը, Սեյրան Մալխասյանը, ջավախքցի աշուղ Ալիք Ջավախքը եւ այլ հյուրեր: Գուրի Եթերի բանաստեղծությունները ասմունքեցին նրա զավակներն ու թոռները: Խոսքով հանդես եկան Մուշեղ Գասպարյանը, Սուսաննա Իսահակյանը, խուլգումոցի բանաստեղծուհի Եվա Չիվչյանը եւ Գուրի Եթերի մանկության ընկեր, բանաստեղծ Հակոբ Ավետիսյանը: Ելույթ ունեցան նաեւ տաղանդավոր երաժիշտ, դուդուկահար Վաչե Գաբրիելյանը եւ երգիչ Ալֆոն Կուլախսզյանը: Բացօթյա տոնահանդեսը բացեց Գուրի Եթերի այրին՝ բանաստեղծուհի Սիլվա Սիփանուհին, վարեց նրա երաժիշտ դուստրը՝ Անի Եթերը: Միջոցառումից հետո հյուրերն այցելեցին Գուրի Եթերի շիրիմին, խնկարկեցին նրա հիշատակը եւ Տունթանգարանի հուշամատյանում գրառեցին իրենց սրտի խոսքը: Նշենք, որ այս պոեզիայի օրը նշվելու է ամեն տարի օգոստոսի ամսվա վերջին կիրակի օրը:

***ԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ***
*գ.Տուրցխ, Ախալքալաքիի մունիցիպալիտետ*

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

## ԵՐԿՀԱՐԿԱՆԻ ԳՆԱՑՔՆԵՐՈՒՄ ԾԽԵԼՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

«Վրացական երկաթուղին» ուղեւորներին կոչ է անում երկհարկանի գնացքներում խուսափել սիգարետներ եւ էլեկտրասիգարետներ ծխելուց: Ընկերության կողմից տարածված հայտարարության մեջ նշված է, որ STADLER KISS գնացքները հագեցված են անվտանգության արդի համակարգերով եւ սիգարետի ու էլեկտրասիգարետի ծուխը հայտնաբերելու դեպքում, ավտոմատորեն գործարկում են հակահրդեհային համակարգը, որը շրջափակում է գնացքի տարբեր հանգույցները, ինչը կարող է հանգեցնել գնացքի կանգ առնելուն:

Ինչպես նշված է հայտարարության մեջ, նման միջադեպ արդեն տեղի է ունեցել: Բաթումի-Թբիլիսի թիվ 803 STADLER KISS էլեկտրագնացքը երեք անգամ արձագանքել է ծխախոտի ծխի եւ ավտոմատը անջատել գնացքի մի քանի համակարգերը: Իրավիճակը հնարավոր է եղել կարգավորել միայն Սամտրեդիա կայարան մուտք գործելուց հետո:

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ, ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՍԻԳԱՐԵՏԸ ԹԱՆԿ Է 25 ՏՈԿՈՍՈՎ

Ինչպես տեղեկացրել է փորձագետ Իրակլի Նադարեիշվիլին, ներկա դրությամբ, Վրաստանում սիգարետի գինը 25 տոկոսով գերազանցում է Հայաստանի ծխախոտեղենի արժեքին: «Ըստ իս եւ օտարերկրյա փորձագետների կարծիքով, դա աղետալի սահման է, որի դեպքում երկիր ներկրվող մաքսանենգային ապրանքը կարող է համակարգային բնույթ ստանալ, որի հետ դժվար կլինի պայքարել»,- նշեց փորձագետը:

Նա օրինակ է բերում Մեծ Բրիտանիան, նշելով, որ այդ կղզիական պետությունը, իր սահմանների պահպանության հնարավորություններով հանդերձ, չի կարողանում կանխել ծխախոտեղենի 20 տոկոսի մաքսանենգությունը: «Վրաստանը տվյալ պարագայում, իրոք, անպաշտպան է, եւ, եթե անգամ ծխախոտի արժեքը դարձնի 10 լարի, ապա, միեւնույն է, բյուջեի եկամուտը կնվազի երկու երրորդով, կվաճառվի անորոշ որակի մաքսանենգայինը, ինչը կվաճառվի տարբեր ուղիներով՝ անգամ անչափահասներին»,- հայտարարեց փորձագետը:

# ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Արշակունի թագավոր: 8.Կազմակերպված շուկա, որտեղ իրականացվում են արժեթղթերի առքուվաճառքի գործարքները: 10.Քաղաք Արեւմտյան Հայաստանում: 11.Արյունածուծ միջատ: 13.Հավի էգ ճուտ: 14.Շահ, օգուտ: 16.Ճար, ելք: 17.Դեղակոճակ: 19.Ճաշակով հարդարված: 21.Ռուսական էստրադայի աստղ: 22.Բարձրունք, լեռ: 23.Ներքնահարկ: 27.Թամբալություն, ծուլություն: 29.Հունական այբուբենի տառ: 32.«... արքա»: 33.Տատասկ, պսեմ: 35.Բառ, որով կոչում են էակներին: 36.Կղզի Հունաստանում: 37.Երեսին մազը կապած: 39.Դամբարան Հնդկաստանում, ... Մահալ: 42.Արշավ, կրոս: 44.Պետություն Աֆրիկայում: 46.Եվրոպական եռատակտ պար: 49.Միանիշ թիվ: 50.Անտի: 53.Հարվածային երաժշտական գործիք: 54.Բրդյա թելի գործվածք: 55.Հյուսնի, ատաղձագործի գործիք: 56.Իսպանական եւ միջազգային բանվորական շարժման գործիչ Խոսե ...: 57.Սոսկ, գեթ: 58.Վրաց թագուհի: 59.Ծռված ծայրով, կոր: 60.Չոլախ: 61.Աշակերտ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Հայ գրող ... Աղայան: 2.Խարույկ: 3.Նորվեգացի դրամատուրգ, եվրոպական «նոր դրամայի» հիմնադիր Հենրիկ ...: 4.Ոչ կարճ: 5.Չարիք, փորձանք: 7.Երկնային մարմնի շարժման ուղին: 9.Լծկան կենդանի: 12.«... ՏԱՍՍ»՝ լրատվական գործակալություն: 15.Պեպոյի մոտիկ ընկերը: 18.Հողը փորելու գործիք: 20.Հայաստանի Ազգային հերոս ... Դեմիրճյան: 24.Կրկնակոշիկ: 25.Պանդուխտ: 26.Մեծ կշիռ, քաշ ունեցող: 28.Կոկորդ: 30.Վրաստանի արտաքին գործերի նախկին նախարար ... Փանջիկիձե: 31.Կարեկցություն, խիղճ: 33.Օսմանյան իշխանավոր, մեծահարուստ: 34.Բնակելի կառույց: 38.Հայ բանաստեղծ Գեւորգ (Ղեւոնդ) ...: 40.Կտավագործ: 41.Ներկա չէ: 42.Անդունդ, խորխորատ: 43.ԽՍՀՄ վաստակավոր արտիստուհի Լյուդմիլա ...: 45.Մեծ պարկ, տոպրակ (բրբ.): 47....-բուդի: 48.Հայ կին ֆիդայի: 51.Հայոց թագավոր, Սմբատ Ա Բագրատունու որդին: 52.Մահմեդականների աղոթքի հրավեր:

***Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ***

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Կռունկ: 3.Ռաֆայել: 9.Վահան: 11.Աննման: 14.Աշնակ: 15.Մեռոն: 18.Աղ: 19.Սա: 20.Արա: 22.Ոսպնյակ: 25.Սի: 26.Սոսո: 28.Նեսոն:30.Դուստր: 33.Նոնա: 34.Սարդ: 35.Իրար: 37.Ամա: 39.Սաամո: 40.Նաիրա: 43.Ալմա: 44.Առակ: 46.Կարս: 48.Արի: 49.Տարտու: 51.Աշորա: 53.Խան: 55.Սոֆի: 58.Որակ: 59.Անդրի: 61.Եզոպոս: 63.Եմ: 64.Եթե: 65.Որջ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Ռանգ: 3.Ռա: 4.Ահ: 5.Ֆա: 6.Անանյան: 7.Եզնիկ: 8.Վաչե: 10.Ուկրաինա: 12.Ամա: 13.Նեղոս: 16.Ոսպ: 17.Նանի: 20.Արուս: 21.Աստրա: 23.Սոփիո: 24.Կենարար: 25.Սոնա: 27.Որդան: 29.Սոմալի: 31.Սասնա: 32.Արագ: 36.Ան: 38.Օթար: 41.Կարտիկամ: 42.Երուխան: 45.Կտոր: 46.Կրակ: 47.Ատ: 48.Ամ: 50.Արաբո: 52.Շորոր: 54.Նարեկ: 56.Ոչխար: 57.Դսեղ: 60.Իմ: 62.Սե:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445